Արձանագրություն N 8

<< ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» փետրվարի 2017թ.

ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Սարգսյանը և Լ. Հարությունյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մկրտչյանը

<< ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը չկայացաց հայտարարելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով 23.02.2017 թվականի <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի թեժ գծով ստացված բողոքը, պարզեց, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից <<ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017>> ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով ամբողջությամբ և հստակ նկարագրված չէ ձեռքբերվող ապրանքը, որը կարող էր պատճառ հանդիսանալ այլընտրանքային մեկնաբանությունների: Այսինքն չի պահպանվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից <<ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017>> ծածկագրով հայտարարված

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ Լ. Հարությունյան

Վ. Սարգսյան

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան